

ի վերայ վայրի եւ եղուի թշուառացեալ ան-
 ձանց : Ձի աստ տուն եւ անդ , այդի եւ մուլ-
 քէն գրկին կամ թողուն օտարաց , կամ թէ կէս 50
 գինն տան . եւ անդ այսչափ հեծելին բերան
 կամ սրոյ մտանեն . եւ ոչ գիտեն թէ յո՞ եր-
 թան , զի աշխարհն այն աւեր եւ ամայրի է :
 Ոմանք ի ծովն անկան եւ այլք ի ծարաւոյ եւ
 խորչակէ ի ճանապարհին մեռան : Եւ ասին թէ 55
 քանի հարիւր տուն կէմով անցեալ յայնկոյս
 տնով տեղով . իսկ սօխդայք հասեալ ի վերայ
 նոցա եւ սուր ի վերայ եղեալ յանխնայ կոտո-
 րեցին մինչեւ ի սպառ : Սոքա աստ բնաջինջ
 եղան . եւ Անատոլին եղեալքն դարձեալ Շահն 60
 սուրկան տարաւ ի ներս . եւ այլք ի ծով ան-
 կան , լաւ համարելով զմահ քան թէ անկանիլ
 ի ձեռս զօրաց կամ գնալ աւեր աշխարհն : Եւ
 ամենայն կողմանց եղեւ կորուստ Հայոց :
 Փա՛ռք Աստուծոյ : Միթէ կատարած աշխարհի 65
 երեկ կամ դալուստ Նեոին եհաս . բայց կարծեմ
 թէ բանք սրբոյն Ներսէսի կատարեցաւ , որ
 այսպէս Հայոց ազգն բնաջինջ եղան : Եւ այս
 այսչափ փոքր ի շատէ գրեցաք զկսկիծ եւ
 զանցս աղէտից Հայոց համառօտարար եղելոց 70
 իրաց ի ժամանակիս մերում : Եւ Քրիստոսի
 մարդասիրին փառք յաւիտեանս . ամէն :

Ժ. ԿԱՆԱՐԳԻ ԿԱՆԱՅՔ

Դարձեալ թիլին ՌՁԳին (1634) . հոկտեմ-
 բեր ԺԲ . իրեք կախարդ կին կալան ի Լով եւ
 քաղքէն դուրս կուտեալ յլլով փայտ այրեցին 75